ՀՀ Արմավիրի մարզպետի շնորհավորական ուղերձը Հանրապետության տոնի առթիվ

28.05.2019

Արմավիրի մարզի հարգելի բնակիչներ, սիրելի հայրենակիցներ,
Ի սրտե շնորհավորում եմ բոլորիս Հանրապետության տոնի առթիվ:

1918 թվականի մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության հռչակումը տրամաբանական շարունակությունն էր Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերում մեր ժողովրդի մղած հերոսական պայքարի ու հաղթանակների: Հենց այդ ճանապարհով հարյուրամյակների դադարից հետո ծնունդ առավ Հայաստանի առաջին Հանրապետությունը՝ դառնալով հայ ժողովրդի պատմության շրջադարձային իրադարձություն և անկոտրում կամքի վկայություն:

Այսօր բոլորիս պարտքն է մեր հիշողության մեջ կենդանի պահել մեր հերոս նախնիների սխրանքները և առաջնորդվել ազգային գաղափարախոսությամբ ու արժեքներով՝ միասնաբար կերտելով համայն հայության երազանքների Հայաստանը:

Գլուխ խոնարհվելով հայ ժողովրդի հերոս զավակների և հայրենիքի պաշտպանության համար նահատակված բոլոր քաջերի հիշատակի առջև՝ ևս մեկ անգամ շնորհավորում եմ համայն հայությանը Հանրապետության տոնի առթիվ՝ ցանկանալով խաղաղություն և արևշատություն մեր ազատ ու անկախ պետությանն ու հայ ժողովրդին:
Շնորհավոր տոնդ, Հայաստանի Հանրապետություն: